

## ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱՄ ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ   
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածի նպատակն է վերլուծել օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն կատարելու համար դատարան բերվող միջնորդությունների քննությանը ներկայացվող որոշ օրենսդրական պահանջներ: Օրենսդրական կարգավորումներն այնպիսին են, որ հաճախ ինչպես քննչական մարմինների ու դատախազության, այնպես էլ դատարանի կողմից տարբեր կերպ են մեկնաբանվում: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ժամկետի երկարաձգման միջնորդությունների ժամանակ այդ միջնորդություններին ներկայացվող պահանջներից մեկի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ընթացքում ստացված արդյունքի մեկնաբանմանը: Բացի այդ, իրավակիրառ պրակտիկայում դեռևս չկա միասնական մոտեցում օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու միջնորդությունը քննող դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքում առկա օրենսդրական բացը բացահայտելու պարտականության մասով:

Հոդվածը նպատակ է հետապնդում քննել այնպիսի խնդիրներ, որոնք առաջացել են իրավակիրառ պրակտիկայում: Այս առումով հոդվածը նաև արդիական է, քանի որ շարադրվող մոտեցումները կարող են հետաքրքրություն ներկայացնել ինչպես ուսանողների, այնպես էլ փաստաբանների, իրավապահ մարմինների աշխատակիցների և դատավորների շրջանում:

**\* Կարեն Ամիրյան** – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր

**Карен Амირян** – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, судья Апелляционного антикоррупционного суда РА

**Karen Amiryan** – Candidate of Legal Sciences, Associate professor at YSU Chair of Theory and History of State and Law, Judge of the Appellate Anti-Corruption Court of the RA

Էլ. փոստ՝ [amiryankaren@gmail.com](mailto:amiryankaren@gmail.com) <https://orcid.org/0000-0003-2929-7429>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 03.03.2025

Գրախոսվել է՝ 09.06.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

**Բանալի բառեր** – օպերատիվ-հետախուզական միջոցառում, գաղտնի քննչական գործողություն, իրավունքի սահմանափակում, դատական երաշխիք, օրենսդրական բաց

### Ներածություն

Թեմայի արդիականությունը հիմնականում պայմանավորված է այն բանով, որ պրակտիկայում հաճախ առաջանում են խնդիրներ օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ժամկետի երկարաձգման միջնորդությունների ժամանակ այդ միջնորդություններին ներկայացվող պահանջներից մեկի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ընթացքում ստացված արդյունքի մեկնաբանման շուրջ:

Բացի այդ, հանդիպում են իրավիճակներ, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման արդյունքում ստացվել են որոշակի փաստական տվյալներ, այնուհետև երկարաձգված գաղտնի քննչական գործողության ավարտին հնարավոր չի եղել ձեռք բերել որևէ տվյալ, որպիսի պայմաններում նորից ներկայացվում է միջնորդություն օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: Այդպիսի իրավիճակներում դատարանների կողմից գնահատման ենթակա հարցերի պարզաբանումը նույնպես ունի պրակտիկ նշանակություն:

Բացի այդ, իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ են առաջանում այն հարցի շուրջ, թե օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու միջնորդությունը քննող դատարանն արդյո՞ք պարտավոր է բացահայտել ՀՀ քրեական օրենսգրքում առկա օրենսդրական բացը և դրա լույսի ներքո գնահատական տալ ներկայացված միջնորդությանը:

Մույն աշխատանքի նպատակն է պարզաբանել ներկայացված հարցերը և այդ ճանապարհով որոշակի լուծումներ առաջարկել՝ նպաստելու միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ժամկետի երկարաձգման միջնորդություններին ներկայացվող՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ընթացքում ստացված արդյունքին վերաբերող պահանջի բովանդակությունը, օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման արդյունքի՝ սկզբնական փուլում առկայության, հետո բացակայության պայմաններում օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության ժամանակ դատարաննե-

րի կողմից ուշադրության արժանի հարցերին, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու միջնորդությունը քննող դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքում առկա օրենսդրական բացը բացահայտելու պարտականությունը:

Նշյալ հարցերի շրջանակն էլ սույն աշխատանքի առարկան է, որի մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, համադրման, ինդուկցիայի, դեդուկցիայի, ձևական-տրամաբանական մեթոդները:

**Օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու թույլտվության միջնորդության շրջանակում դատարանի իրավասության վերաբերյալ որոշ իրավական խնդիրներ**

*1. Առաջին հարցը վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ժամկետի երկարաձգման միջնորդությունների ժամանակ այդ միջնորդություններին ներկայացվող պահանջներից մեկի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու ընթացքում ստացված արդյունքին:*

Այսպես. 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթը հարուցվում է քննիչի միջնորդության հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ քննիչի միջնորդությունը պետք է պարունակի գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունքը<sup>1</sup>:

Այսինքն՝ քննիչը պետք է իր միջնորդության մեջ հիմնավորի, թե մինչ այդ իրականացված գաղտնի քննչական գործողության կատարումն ինչ արդյունքների է հանգեցրել, առկա՞ են արդյոք որոշակի փաստական տվյալներ, թե՞ ոչ: Այլ կերպ ասած՝ քննիչը պետք է հիմնավորի՝ նախորդած գաղտնի քննչական գործողության իրականացման թույլտվության հիմքում դրված միջնորդությամբ ներկայացված նպատակն իրացվե՞լ է, թե՞ ոչ:

Այս առումով իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպող խնդիրն այն է, որ որոշ դեպքերում դատարանները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նշված՝ «գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունք» ձևակերպումն այնպես են մեկնաբանում, որ այդ արդյունքը պետք է լինի կոնկրետ փաստական տվյալ: Նման մոտեցման կողմնակիցները նշում են, որ արդյունքը ենթադրում է գնահատման ենթակա որևէ բան, տվյալ դեպքում՝ բացահայտված ինչ-որ փաստական տվյալներ, որոնք թույլ կտան դատարանին գնահատել իրավասու մարմնի բարեխղճությունը և արդյունքում գնահատել նաև գաղտնի

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին:

քննչական գործողության կատարման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունն ու իրավաչափությունը: Այս մոտեցումը չի ընդունում այն տեսակետը, որ արդյունքի բացակայությունը նույնպես արդյունք է: Մինչդեռ հակառակ մոտեցման կողմնակիցները պնդում են, որ արդյունք ասելով պետք է հասկանալ ոչ միայն որոշակի փաստական տվյալներ ձեռք բերած լինելը, այլև անգամ դրանց բացակայությունը: Այսինքն՝ անգամ այն դեպքում, երբ գաղտնի քննչական գործողություն է կատարվել, բայց հնարավոր չի եղել ձեռք բերել որոշակի փաստական տվյալ, ապա դա ինքնին չի կարող մեկնաբանվել որպես արդյունքի բացակայություն և որպես հետևանք՝ հանգեցնել գաղտնի քննչական գործողության կատարման ժամկետի երկարաձգման վարույթի հարուցման մերժման:

Այս հարցի վերաբերյալ մեր մոտեցումն այն է, որ տվյալներ ստացած չլինելը նույնպես դիտվում է որպես գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունք, և դրա հետևանքը չպետք է լինի վարույթի հարուցումը մերժելը, իսկ արդյունքի բացակայության պայմաններում միջնորդության հիմնավորվածության (օրինականություն, անհրաժեշտություն, համաչափություն) և, ըստ այդմ, բավարարման կամ մերժման հարցը պետք է քննարկման ու գնահատման առարկա դառնա արդեն հարուցված վարույթի փուլում:

Հակառակ մոտեցման դեպքում, երբ գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում վարույթի համար նշանակություն ունեցող որևէ տվյալ ձեռք բերված չլինելը մեկնաբանվի որպես վարույթի հարուցումը մերժելու անվերապահ հիմք, այն կլինի վարույթն իրականացնող մարմնի գործունեության ոչ իրավաչափ սահմանափակում, հանցավորության դեմ պայքարի հնարավորությունների անհամաչափ նվազեցում, ինչն էլ իր հերթին կհանգեցնի վարույթի հանրայնության սկզբունքի խախտման:

Այլ կլինե՞ր իրավիճակը, երբ միջնորդությունն իր մեջ չպարունակեր ո՛չ տվյալ, ո՛չ տվյալի բացակայության մասին նշում, քանի որ նման պարագայում կստացվե՞ր, որ ձևի տեսանկյունից պահանջը պահպանված չէ, ինչն էլ բավարար հիմք կլինե՞ր գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունքի բացակայության հանգամանքը հավաստելու և վարույթի հարուցումը մերժելու համար:

Ընդհանրացնելով կարծում եմ, որ գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունք ներկայացնելն ապահովում է միջնորդության բացառապես ձևի տեսանկյունից պահանջը, իսկ տվյալներ ձեռք չբերելը նույնպես արդյունք է, որի դեպքում, երբ ներկայացված միջնորդությունը պարունակում է տվյալ այն մասին, որ գաղտնի քննչական գործողության ընթացքում տվյալ ձեռք չի բերվել, այն չի կարող դիտվել որպես արդյունքի բացակայություն:

2. Երկրորդ հարցը վերաբերում է այն իրավիճակին, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման արդյունքում ստացվել են որոշակի փաստական տվյալներ, այնուհետև երկարաձգված օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել որևէ տվյալ, ապա այդ արդյունքի բացակայությունն արդյոք ինքնին կարող է հանգեցնել օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման ժամկետը երկարաձգելու միջնորդության մերժման:

Որոշ դեպքերում դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության վերոնշյալ դրույթն այնպես է մեկնաբանվում, որ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկրորդ անգամ երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ դրան անմիջապես նախորդած ժամանակահատվածում ստացված լինեն որոշակի արդյունքներ՝ անկախ այն հանգամանքից, թե դրանից առաջ արդյունք առկա եղել է, թե ոչ, առավել ևս՝ անկախ այդ արդյունքի բնույթից ու վարույթի համար ունեցած նշանակության աստիճանից:

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության իրականացման սկզբնական ժամանակահատվածում առկա լինեն որոշակի փաստական տվյալներ, այսինքն՝ արձանագրվի արդյունք, հետո առաջին երկարաձգմամբ որևէ արդյունք չստացվի, այնուհետև արդեն երկրորդ երկարաձգման բավարարմամբ նորից արդյունքն առկա լինի:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված «... գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունքը» ձևակերպումն իրավակիրառ պրակտիկայում չի կարող այնպես մեկնաբանվել, որ նախորդ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության ժամկետի երկարաձգման արդյունքում որևէ փաստական տվյալի (արդյունքի) բացակայությունն ինքնին ոչ հիմնավոր է դարձնում օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության ժամկետի երկարաձգման միջնորդությունը այն պայմաններում, երբ մինչ այդ կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարմամբ բացահայտվել են որոշակի փաստական հանգամանքներ (առկա է եղել բովանդակային արդյունք):

Այսինքն՝ այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման արդյունքում ստացվել են որոշակի փաստական տվյալներ, այնուհետև երկարաձգված օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության արդյուն-

քում հնարավոր չի եղել ձեռք բերել որևէ տվյալ, ապա այդ արդյունքի բացակայությունն ինքնին չի կարող հանգեցնել այդ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման ժամկետը երկարաձգելու միջնորդության մերժման, այլ ցանկացած նման դեպքում դատարանները նախ պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, որ թեկուզ նախորդած, բայց օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման արդյունքում որոշակի փաստական տվյալներ, այնուամենայնիվ, ձեռք են բերվել, երկրորդ՝ այդ ստացված արդյունքը բովանդակային առումով գնահատման առարկա դարձնեն: Հետևաբար, նման դեպքերում ներկայացված միջնորդությունները մերժելիս դատարանների որոշումները պետք է պատճառաբանվածության առավել բարձր մակարդակ ունենան:

*3. Երրորդ հարցը վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու միջնորդությունը քննող դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքում առկա օրենսդրական բացը բացահայտելու պարտականությանը:*

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ ներկայացվում է դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ գաղտնի քննչական գործողություն իրականացնելու միջնորդություն (մասնավորապես, «Ներքին դիտում», «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում») այն հիմնավորմամբ, որ առկա են որոշակի տվյալներ առանձնապես խոշոր չափով կաշառք տալու վերաբերյալ, որը համարվում է ծանր հանցագործություն: Նման իրավիճակներում բարձրացվող հարցն այն է, թե արդյոք դատարանները կարող են կամ առավել ևս պարտավոր են ներկայացված միջնորդությունը մերժել այն հիմնավորմամբ, որ կաշառք տալու չափերի՝ ՀՀ քրեական օրենսգրքում բացակայության պատճառով անձի արարքը պետք է որակվի ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, այլ նույն հոդվածի 1-ին մասով, որն արդեն միջին ծանրության հանցանք է, որով էլ պայմանավորված՝ չի բավարարում օրենսդրությամբ նախատեսված՝ համանման միջնորդություններին ներկայացվող պահանջներից հանցանքի ծանրությանը ներկայացվող պահանջին:

Այս հարցի հետ կապված կիրառելի են հետևյալ իրավական նորմերը և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի համաձայն<sup>2</sup>,

«1. Կաշառք տալը՝ պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին անձամբ կամ միջնորդի միջոցով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին:

կամ որևէ այլ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը՝ պաշտոնատար անձի իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: (...)

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ առերևույթ առկա են հիմքեր՝ կասկածելու, որ անձը, որի նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն (...):»

ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«3. Միջին ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը:

4. Ծանր հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ «Հափշտակության, պատճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերը՝ սույն օրենսգրքում հափշտակված գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր

<sup>3</sup> Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը:

չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի»:

Քրեական օրենքի որոշակիության առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է. «(...) [Բ]ացարձակ կանոնն այն մասին, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը, ինչպես նաև այն, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի: Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (ի թիվս այլ աղբյուրների, տե՛ս Կանտոնին ընդդեմ Ֆրանսիայի (CANTONI v. FRANCE) գործով Եվրոպական դատարանի 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17862/91, կետ 29; Է.Կ.-ն ընդդեմ Թուրքիայի (E.K. v. TURKEY) գործով 2002 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 28496/95, կետ 51): Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պատժի նշանակման ժամանակ (տե՛ս Աչորն ընդդեմ Ֆրանսիայի (ACHOUR v. FRANCE) Մեծ պալատի 2006 թվականի մարտի 29-ի որոշումը, գանգատ թիվ 67335/01, կետ 41): Անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և անհրաժեշտության դեպքում դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում, և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (ի թիվս այլ աղբյուրների, տե՛ս վերը վկայակոչված՝ Կանտոնիի գործով որոշման 29-րդ կետը): Միննույն ժամանակ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող ընկալվել որպես դատական մեկնաբանման միջոցով քրեական պատասխանատվության կանոնների աստիճանական հստակեցման բացառում, պայմանով, եթե հետևող զարգացումը համապատասխանում է արարքի էությանը և կարող է ողջամտորեն կանխատեսելի լինել (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Ստերլեցը, Կոսլերը և Կրենզն ընդդեմ Գերմանիայի (Streletz, Kessler and Krenz v. Germany) գործով 2011 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 34044/96 35532/97 44801/98, կետ 50): Մատչելի և ողջամտորեն կանխատեսելի դատական մեկնաբանության բացակայությունը նույնիսկ կարող է հանգեցնել ամբաստանյալի՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտում արձանագրելուն (տե՛ս Պեսսինոն ընդդեմ Ֆրանսիայի (PESSINO v. FRANCE) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 40403/02, կետեր 35-36): (...) Վե-

րունշյալ դիրքորոշումներից հետևում է, որ օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշը բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դեր ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին»<sup>4</sup>:

Հարկ է փաստել, որ վերը նշված նույն որոշման շրջանակներում (կետեր 17.2.-18) Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Հետևաբար նման իրավիճակն օրենսդրական կարգավորման խնդիր է: (...) [Դ]ատական մեկնաբանման շրջանակները սահմանափակված են օրինականության սկզբունքով: Այդպիսի մեկնաբանումը հնարավոր է այն դեպքում, երբ իրականացվում է օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորման շրջանակներում, բխում է դրա էությունից և բացառում քրեական օրենքի տարածական մեկնաբանումը կամ անալոգիայով կիրառումը: Վերոգրյալից հետևում է, որ այն դեպքում, երբ հանցակազմի պարտադիր հատկանիշը սահմանող հասկացության բովանդակության բացահայտումը կախված չէ գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է սահմանվել դրանցից վերացարկված, սակայն սահմանված չէ օրենքով, դատարանը, չունենալով գնահատման օբյեկտիվ չափանիշներ, զրկված է դրանք մեկնաբանելու հնարավորությունից: Նման դեպքերում օրենքը չի համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտման»:

Վճռաբեկ դատարանը 2024 թվականի հուլիսի 26-ին ՀԿԴ/0054/01/22 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(...) Անդրադառնալով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով նախատեսված կաշառք տալու հանցակազմին՝ հարկ է արձանագրել, որ տվյալ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով որպես ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանք նախատեսված են նույն արարքի կատարումը խոշոր և առանձնապես խոշոր չափերով: «Խոշոր» և «առանձնապես խոշոր» չափ հասկացությունների պարագայում գործ ունենք չափելի երևույթների հետ, ուստի օրենսդիրը կա մ ՀՀ գործող

<sup>4</sup> Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Սիմիոյանի վերաբերյալ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 գործով որոշման 16-17-րդ կետեր:

քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի շրջանակներում՝ ընդհանուր հասկացությունների ներքո, կա մ շՇ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով պետք է հստակ սահմաններ, թե կաշառք տալու հանցակազմի պարագայում որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր: Մինչդեռ քրեական օրենսգրքի վերաբերելի նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կաշառք տալու հանցակազմի պարագայում կաշառքի առարկայի խոշոր և առանձնապես խոշոր չափերը չեն բացահայտվել:

Այսպես՝ օրենսգրքի 3-րդ հոդվածի 17-րդ կետում խոսքը միայն հափշտակության, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերի մասին է, իսկ կաշառք տալու դեպքում կաշառքի առարկայի չափերը չեն կարող նույնացվել դրանցից որևէ մեկի հետ: Անդրադառնալով հնարավոր այն մեկնաբանությանը, որ կաշառք տալու չափերը կարող են դիտարկվել հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի ներքո, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նման մեկնաբանումը կլինի խիստ տարածական և չի համապատասխանի օրենքի որոշակիության չափանիշներին, քանի որ վերոնշյալ դեպքում խոսքը գույքը կամ օգուտը հանցավոր ճանապարհով ձեռք բերելու կամ ստանալու, այլ ոչ թե տալու մասին է:

12. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շՇ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացություններն օրենսդրորեն բացահայտված չեն, մասնավորապես՝ սահմանված չէ, թե կաշառք տալու հանցակազմի պարագայում կաշառքի առարկայի որ չափն է համարվում խոշոր, իսկ որը՝ առանձնապես խոշոր: Այլ կերպ՝ առկա է օրենսդրական բաց, ինչը որևէ պարագայում չի կարող լրացվել կամ հաղթահարվել դատական մեկնաբանության միջոցով, քանզի դատական մեկնաբանման շրջանակները խստորեն սահմանափակված են օրինականության սկզբունքով, իսկ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ շՇ գործող քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասն արգելում է քրեական օրենքի ընդհանուր մասի նորմերն անալոգիայով կիրառելը, եթե դա վատթարացնում է անձի վիճակը:

Այսպիսով, շՇ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 3-րդ մասի 2-րդ կետը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, բավարար չափով կանխատեսելի չեն, ուստի չեն կարող անձին դատապարտելու հիմք լինել: (...)»:

Վկայակոչված իրավակարգավորումների և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հաշվի առնելով այն, որ «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացություններն ինքնին ենթադրում են չա-

փելի երևույթներ, և դրանք, օգտագործվելով քանակի, կշռի կամ արժեքի հատկանիշներով օժտված առարկաները բնութագրելիս, պայմանավորված չեն գործի կոնկրետ հանգամանքներով և օբյեկտիվորեն կարող են սահմանվել դրանցից վերացարկված, նկատի ունենալով նաև, որ քրեական օրենքի տարածական մեկնաբանումը և ընդհանուր մասի նորմերի անձի վիճակի վատթարացման դեպքում անալոգիայով կիրառելն անթույլատրելի է, կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունների բովանդակությունը նույն օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասում սահմանված չլինելն օրենսդրական բաց է, որի հետևանքով նշյալ օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 3-րդ մասի 2-րդ կետը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին (բավարար չափով կանխատեսելի չեն), հետևաբար նաև դրանք անձին մեղադրելու հիմք չեն:

Այսինքն՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը չի սահմանում, թե որն է կաշառք տալու խոշոր և առանձնապես խոշոր չափը, այսինքն՝ քննարկման առարկայի դեպքում տեղի է ունեցել արարքի մասնակի ապաքրեականացում:

Վերոշարադրյալից ելնելով՝ կարծում եմ, որ վերոնշյալ ձևով ներկայացվող միջնորդությունը բավարար տվյալներ չի պարունակում այն մասին, որ միջնորդությամբ նկարագրված ենթադրյալ արարքը առերևույթ ծանր հանցանք է:

Ավելին, ստացվում է, որ նման դեպքերում ներկայացվող միջնորդությունը պարունակում է բավարար տվյալներ այն մասին, որ նկարագրված ենթադրյալ արարքը առերևույթ միջին ծանրության հանցանք է, իսկ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» և «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները թույլատրվում են իրականացնել միայն այն դեպքում, երբ առերևույթ առկա են հիմքեր՝ կասկածելու, որ անձը, որի նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն, իսկ այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործությունը միջին ծանրության է, վերջինս արդեն իսկ բավարար հիմք է ներկայացված միջնորդությունը մերժելու համար:

Իրավակիրառ պրակտիկայում եղել են դեպքեր, երբ նմանատիպ միջնորդությունները ներկայացվել են դատարան մինչև Վճռաբեկ դատարանի կողմից վերոնշյալ թիվ ՀԿԴ/0054/01/22 գործով որոշումը կայացնելը: Այս մասով պետք է նկատի ունենալ հետևյալը. ինչ վերաբերում է հնարավոր այն փաստարկին, որ մինչև Վճռաբեկ դատարանի կողմից ՀԿԴ/0054/01/22 որոշմամբ դիրքորոշում արտահայտելն է նշյալ միջնորդությունը ներկայացվել՝ կարծում եմ, որ թեև միջնորդությունը ներկայացնելիս Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշումը դեռևս կայացրած չի եղել, սակայն այդ հանգամանքը որևէ նշանակություն ունենալ չի կարող, քանի որ օրենսդրական բացը մինչ այդ էլ առկա է

եղել, այլ է հարցը, որ այդ օրենսդրական բացը հաստատվել է նաև հենց Վճռաբեկ դատարանի կողմից:

Ընդ որում, վերոնշյալ փաստարկը որոշակի չափով կարող էր ընդունելի լինել, եթե Վճռաբեկ դատարանը կայացներ նույն որոշումը, բայց այլ հիմնավորումներով, մինչդեռ Վճռաբեկ դատարանը նշում է առկա օրենսդրական բացի և արարքի մասնակի ապաքրեականացված լինելու մասին, ինչը լրիվ այլ իրավիճակ է, քան այն, որ Վճռաբեկ դատարանը փաստեր զուտ տարամեկնաբանման առկայությունը:

Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը չի նշում, որ օրենսդրական տարբեր նորմերի միջև առկա են կոլիզիա, իրավադրույթների տարբերեցման և հակադիր մեկնաբանման խնդիր, այլ հստակ արձանագրում է, որ խոսքը օրենսդրական բացի և մասնակի ապաքրեականացված արարքի մասին է:

Մա առանցքային նշանակություն ունի այն հարցադրմանը պատասխանելու համար, թե արդյոք մինչև Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումը դատարանները պետք է քննարկեին այդ հարցերը, արդյոք դրանով դատարանները դուրս չէին գա դատական երաշխիքների շրջանակից, և արդյոք դա չէր դիտվի խորքային ու բովանդակային քննություն դատարանների կողմից:

Ելնելով վերոնշյալից՝ կարծում եմ, որ ներկայացված միջնորդությունների քննության շրջանակում դատարանները, ի թիվս այլնի, երբ անդրադառնում են ենթադրյալ արարքի ծանր կամ առանձնապես ծանր լինելուն, ապա պետք է նկատի ունենան, որ ՀՀ քրեական օրենսգրքում կաշառք տալու չափերի բացակայությամբ պայմանավորված՝ դատարանները պետք է մերժեն ներկայացված միջնորդությունները, և այդպիսի վերլուծությունը չի կարող դիտարկվել ներկայացված միջնորդությունների քննության համար կիրառելի առերևույթության մակարդակից ավելի խիստ մակարդակի վերլուծություն:

Այլ կերպ ասած՝ երբ ներկայացված միջնորդությամբ նշվում է, որ առկա են անձի կողմից առերևույթ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ենթադրյալ հանցագործություն կատարելու մասին որոշակի տվյալներ, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքում կաշառք տալու չափերի բացակայության հանգամանքով պայմանավորված՝ այդ անձի արարքը չէր կարող որակվել 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (ընդ որում, դա այն դեպքում, եթե ներկայացված միջնորդությամբ բացակայում է վկայակոչումը ենթադրյալ հանցանքը հանցավոր կազմակերպության կողմից ենթադրաբար կատարելու մասին), ստացվում է, որ անգամ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետով որակվելու դեպքում այդ արարքը միջին ծանրության է, ինչը չի բավարարում «Ներքին դիտում» և «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավաչափության պայմաններից հանցանքի տեսակին (ծանրության աստիճանին) վերաբերող պայմանին:

### Եզրակացություն

Հոդվածում կատարված վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ստացված արդյունք ներկայացնելն ապահովում է միջնորդության բացառապես ձևի տեսանկյունից պահանջը, իսկ տվյալներ ձեռք չբերելը նույնպես արդյունք է, որի դեպքում, երբ ներկայացված միջնորդությունը պարունակում է տվյալ այն մասին, որ գաղտնի քննչական գործողության ընթացքում տվյալ ձեռք չի բերվել, այն չի կարող դիտվել որպես արդյունքի բացակայություն:

2. Այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման արդյունքում ստացվել են որոշակի փաստական տվյալներ, այնուհետև երկարաձգված օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել որևէ այլ տվյալ, ապա այդ արդյունքի բացակայությունն ինքնին չի կարող հանգեցնել այդ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության կատարման ժամկետը երկարաձգելու միջնորդության մերժման:

3. «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» և «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվության քննության շրջանակում դատարանները, ի թիվս այլնի, երբ անդրադառնում են ենթադրյալ արարքի ծանր կամ առանձնապես ծանր լինելուն, ապա պետք է նկատի ունենան, որ ՀՀ քրեական օրենսգրքում կաշառք տալու չափերի բացակայությամբ պայմանավորված՝ դատարանները պետք է մերժեն ներկայացված միջնորդությունները:

**КАРЕН АМИРЯН – Некоторые правовые вопросы, касающиеся юрисдикции суда в рамках ходатайства о разрешении на проведение оперативно-розыскного мероприятия или секретного следственного действия.** – Цель статьи проанализировать некоторые законодательные требования, предъявляемые к рассмотрению ходатайств, поданных в суд для проведения оперативно-розыскного мероприятия или тайного следственного действия. Законодательные нормы таковы, что часто как следственные органы и прокуратура, так и суд интерпретируют их по-разному. Речь, в частности, относится к интерпретации результата, полученного в ходе оперативно-розыскного мероприятия или проведения тайного следственного действия, в соответствии с одним из требований, предъявляемых к этим ходатайствам во время ходатайств о продлении срока проведения оперативно-розыскного мероприятия или тайного следственного действия. Кроме того, в правоприменительной практике до сих пор нет единого подхода в части обязанности суда, рассматривающего ходатайство о проведении оперативно-розыскного мероприятия или тайного следственного действия, выявить законодательный пробел, существующий в Уголовном кодексе РА.

Другими словами, статья преследует цель представить проблемы, которые возникли в правоприменительной практике. В этом отношении статья также актуальна, поскольку

представленные подходы могут представлять интерес как для студентов, так и для адвокатов, сотрудников правоохранительных органов и судей.

**Ключевые слова:** *оперативно-розыскное мероприятие, тайное следственное действие, ограничение права, судебная гарантия, законодательная пробел*

**KAREN AMIRYAN – Some Legal Issues Related to the Jurisdiction of the Court in the Framework of an Application for Permission to Conduct an Operational Search Event or a Secret Investigative Action.** – The purpose of the article is to analyze some of the legislative requirements for the consideration of petitions submitted to the court for conducting an operational search event or a secret investigative action. The legal norms are such that often both the investigating authorities and the prosecutor's office, as well as the court interpret them in different ways. This, in particular, refers to the interpretation of the result obtained during an operational search event or a secret investigative action, in accordance with one of the requirements imposed on these requests during requests for an extension of the period of an operational search event or a secret investigative action. In addition, there is still no unified approach in law enforcement practice regarding the obligation of a court considering a request for an operational search measure or a secret investigative action to identify a legislative gap existing in the RA Criminal Code. In other words, the article aims to present the problems that have arisen in law enforcement practice. In this regard, the article is also relevant, since the presented approaches may be of interest to both students and lawyers, law enforcement officers and judges.

**Key words:** *operational search activity, secret investigative action, restriction of rights, judicial guarantee, legislative gap*

### Գրականության ցանկ

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին (ՀՀ kreakan datavarutyanyan orensngirk, yndunvats 2021 tvakan hunsisi 30-in.):
- ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին (ՀՀ kreakan orensngirk, yndunvats 2021 tvakan mayisi 5-in):
- «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք («Operativ-hetakhuzakan gortzuneutyanyan masin» ՀՀ orenk).
- Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Սիմիդյանի վերաբերյալ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 գործով որոշում (Vchrabek datarani — Davit Simidyan-i veraberyal 2014 tv. dektemberi 16-i tiv YED/0122/01/13 gortsov voroshum):
- Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ ՀԿԴ/0054/01/22 որոշում (Vchrabek datarani 2024 tv. hulis 26-i tiv HKD/0054/01/22 voroshum):